Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-960-10.08.2010-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

<<Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին

ՀՈԴՎԱԾ 1. <<Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-409-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 12-րդ պարբերությունում <<ղեկավարի եզրակացությունը>> բառերից հետո լրացնել <<կամ կատարողականի արդյունքները>> բառերը:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետում <<տարեկան միանվագ պարգևատրումը>> բառերից հետո լրացնել <<կամ կատարողականի արդյունքներով տրվող պարգևատրումը>> բառերով:

ՀՈԴՎԱԾ 3. Օրենքի 11-րդ հոդվածում՝

1.1-ին և 2-րդ մասերում <<քաղաքացիական ծառայողի>> բառերից առաջ լրացնել <<քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն զբաղեցնող>> բառերով:

2. լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-րդ, 2.2-րդ և 2.3-րդ մասերով.

<<2.1. Քաղաքացիական ծառայողի աշխատավարձի բնականոն հերթական միավոր ավելացումը նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը (մարմինը) կասեցնում է մեկ տարով, եթե նախորդ տարվա ընթացքում ներկայացրած երկու կիսամյակների կատարողականների գնահատման արդյունքներից մեկը ցածր է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կատարողականների գնահատման ցուցանիշից:

2.2. Նախորդ տարվա ընթացքում քաղաքացիական ծառայողի երկու կիսամյակների կատարողականների գնահատման արդյունքները Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կատարողականների գնահատման ցուցանիշից ցածր լինելու դեպքում նրա աշխատավարձն իջեցվում է մեկ միավորով, եթե չի կիրառվում կարգապահական տույժի առավել խիստ միջոց:

2.3. Քաղաքացիական ծառայողների կատարողականների գնահատման ցուցանիշը սահմանվում է սույն օրենքի 13-րդ հոդվածի 3.1-րդ մասում նախատեսված կարգով:>>:

ՀՈԴՎԱԾ 4. Օրենքի 13-րդ հոդվածում՝

1. 2-րդ մասի 2-րդ, 3-րդ պարբերություններում և 3-րդ մասում <<Քաղաքացիական ծառայողի>>, <<Քաղաքացիական ծառայողը>>, <<Քաղաքացիական ծառայողների>> բառերը համապատասխանաբար փոխարինել <<Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի>>, <<Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողը>>, <<Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների>> բառերով:

2. լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-րդ մասով.

<<3.1 Քաղաքացիական ծառայողի կատարողականի հիման վրա պարգևատրումը քաղաքացիական ծառայողների պարգևատրման ֆոնդից ունի միանվագ բնույթ: Քաղաքացիական ծառայողի կատարողականի հիման վրա պարգևատրման և դրա հաշվարկման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը>>:

ՀՈԴՎԱԾ 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

<<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված մարմիններում, որտեղ դեռևս ներդրված չէ աշխատանքային ծրագրերի կազմման և կատարողականների գնահատման համակարգը, պարգևատրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են մինչ սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող նորմերին համապատասխան:>>:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

<<Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ կատարված առաջարկության

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿԸ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Ա. Զաքարյան	<<Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ կետում լրացվող 3.1 մասի առաջին նախադասությունից հետո ավելացնել <<Առանձին դեպքերում կատարողականի հիման վրա պարգևատրումը կարող է կատարվել նաև <<Քաղաքացիական ծառաության մասին> ՀՀ օրենքով սահմանված քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվող խրախուսանքի այլ տեսակներով՝ խրախուսելու իրավունք ունեցող պաշտոնատար անձի հայեցողությամբ>> բառերը:	Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի (Օրենք) 31-րդ հոդվածը սահմանում է քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվող խրախուսանքի տեսակները, որոնք իրավասու պաշտոնատար անձի կողմից կարող են կիրառվել նաև քաղաքացիական ծառայողի կատարողականի արդյունքների հիման վրա: Ուստի, առաջարկում եմ <<Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ

		կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում առաջարկվող լրացմանը անդ-րադառնալ քաղա-քացիական ծառայու-թյան համակարգում կատարողականի գնա-հատման ինստիտուտի գործնական կիրառու-մից հետո: